

Ի Գաւառէն Ակնայ ի գիւղէն Նարզվե-
րայ Վարդպետեան հանգուցեալ հացա-
գործ Յօհաննէս ալայ:

48. Մինչ բազմաւորց ակն ունէի,
կենաց առնուլ զըրջան.
Ի գործ պաշտօն հայրենասէր
ցուցանելոյ անգուլ ջան:
Ընդ հովանեաւ ոստոց իմոց,
զիմ հարազատ ծննդոց.
Կեալ յուսայի հանգստաւէտ,
մինչ ի խորին կեանս ծերոց:
Անկարծ մահուն անդարձ վճիռ,
զիս պաշարեաց ծերունիս.
Եւ մնկնեցաւ հոգին անմահ
մարմինս Մնաց ի շիրմիս:
Արդ ո՛ր անցորդք մահկանացուք,
հանդիպել ձեր յայս տապան.
Յերկնաւորէն մաղթեմ խնդրել,
վասն իմ՝ որ ինչ ձեզ (ա)րժան:
յամի Տեառն 1844. յուլիս 14.

49. Փող ազդողական պատգամաց վերին,
Քարոզիլ բանից երկնից արքային.
Սա գիտակ լեզուաց և ուսմանց խորին.
Եւ անխոնջ թարգման ըստ բաւականին.
ՅԱլթունեան տոհմէ արհի Տէր Պետրոս
Առաքելագործ այդ եպիսկոպոս.
Մահաոթի խիտիւ աստի կենցաղոյս,
Չև վաթսեամեայ եղաւ ընդ հողոյս:
Մնայ գալտեան փրկչիդ կենարար,
Անուլ զպսակ խնամօքդ անճառ:
Արդ հովիւդ քաջ, գատաւոր արդար
Տո՛ր սմա հանգչիլ յերկնից քո տաճար:
Յամի Տեառն 1844 սեպտեմբեր 26.

Երիբմ Տագէսեան Պարօն աղայի
ղուտոր Ասանէթ:

50. Արմատոց բարեաց՝ պանծալի զաւակ,
մարմնով կուտակեաց, ողջամիտ տատրակ:
Այն ինչ երեսուն ամաց իւր հասակ:
Չնջեաց տարածամ մահաբեր խորշակ:
Յիտուս իմ լոյս իմ հայնաց յիմ վիճակ,
յոսկիրս իմ ցօղեալ զարեան քո կայլակ:
Մատո՞ զունկն քո, լուր իմ արդակ:
Տեսելամբդ զմայլել յօթներկիեան վտակ:
յամի տեառն 1843.
օգոստ. 9.

Ե
Սերունդ մեծանուն զարմին Տագէսեան:

51. Մեծ հատվածառ Պարոն Ամիրայն,
Ունէր բարեւէր սիրտ ազնուական.
Հեզ և միշտ խոնարհ ի կեանս իւր համայն.
Իօթանասնամեայ բարւօք ծերութեան
Գեղեցիկ մահուամբ ընկաւս վախճան.
Թողեալ պերճաշուք որդիս ընտրական
Բարեյիշատակ յաշորդ տոհմական:
Յամի Տեառն
1849
Յունվարտ
25



ԳԵՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՆ

ԻՐ ԱՆՏԻՊ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. տես Բազմավէպ, 1928, էջ 161)

Կ'ըսուի թէ ո՛վ որ սիրտ ունի, ամէն
բան ունի. որք՝ այնքան զգեցցիկ կը պատ-
շահի այս զբուցուածքը. բան նոյն ինքն
Գէորգ Ապտուլլահի, որ աշխարհիկ տա-
րագին տակ կը կրէր լուսամիտ և անկեղծ
կրօնականի մը մաքուր և վեհանձն սիրտը:

Ան շատ լաւ իմաստասիրած է մարդ-
կային կեանքը, կը ճանչնայ անոր տկա-
րութիւնները, կարօտութիւնները ինչպէս
նաև վտանգները, որոնց մէջ կ'ապրի գայթ
ի գայթ: Դարուս ազատախոհ և արդիա-
կան յոռի վարդապետութիւնները, որ ոչ
նուազ իրենց չարաղէտ ազդեցութիւնը ու-
նեցան մեր ցեղին բազմաթիւ երիտասարդ-
ներուն և նոյն իսկ իրենց կեանքի կէս
դարը բոլորածներուն վրայ, երբեք չկա-
րողացան անոր յիստոնէական՝ առողջ
սկզբունքներով սնած և զաստիարակուած
հոգին այլայլել:

Իր սրտին խորը կ'արծարծէր նուիրա-
կան հուր մը եռանդեան և սիրոյ առ Աս-
տուած, առ կրօնն և ընկերն. և հաւատաբը՝
որ չի ժպտիր անոնց՝ որոնք տարտամ
և շինծու վարդապետութիւն մը կը հա-
մարին զայն, և որոնց համար, ինչպէս
կ'ըսուի, Աստուած լոկ հարցական կ'էս
մ'է և ոչ այլ ինչ, այդ հաւատաբը՝ իր
կեանքի միակ իտէալը և մշտավառ փա-
րուր եղաւ, որուն միշտ փարած Յնաց
հոգեկին:

ԻՄ ՆԵՐՇԵՂՈՒԾՆԵՐՍ

իր սակաւատող գրութիւնները փորձա-
 ութեցնելով արդարեւ կենսաբի մշակութիւններն իւր
 համոզուած անկեղծ արտայայտութիւններն և նորագոյն
 սրտի մը թորչներն են. միով
 բանիւ նշմարութիւններ են անոնք՝ որ
 կը ձկարին մարդու հոգին բարձրացնելու
 և երջանկացնելու ազնիւ նպատակին: Եւ
 չէ՛ որ արդէն բնութիւնը մարդ ստանձ
 է կրկին յատկութիւններով՝ մին՝ բարձր մը-
 ստանձներ և ազնիւ գործեր արտադրելու,
 և միւս՝ անոնց վրայ հիանալու և նմա-
 նելու. ուրեմն զոյգն ժառանգութիւն մը չէ
 այն՝ զոր կը թողու իր յեանորդներուն
 Գէորդ Ապտուլլահ. ան գործնական առա-
 քինութեան ամէնէն պերճախօս դասն է,
 որուն համար նոյն իսկ Վիկտոր Հիւկոյի
 պէս անձ մը ըսած է. «Հանճարի մը առ-
 ջև կը խոնարհիմ, իսկ առաքինութեան
 առջև ծունը կը դնեմ»:

Արդարեւ չկայ մէկը որ նոյն իսկ ազատ
 կերպով մը իր մէջ զգայ Աստուծոյ ներ-
 կայութիւնը, լուսով մը՝ որ խորհրդաւոր
 կերպով գինքը կը ըրջպատէ, և ձայնով
 մը՝ որ բարձրէն լուսեան մէջէն կը խօ-
 սի. զի ինչպէս խօսքին և արուեստին գե-
 ղեցիկը Աստուծոյ գեղեցկութեան արտա-
 ցոլացումն և անոր իմաստութեան մէջ ճա-
 ուգայթն է, նոյնպէս նաև կրօնական
 զգացումը մարդու հոգւոյն մէջ բնական
 վիճակն է՝ հանդէպ գերազույն էակին. ըստ
 որում և Տիտոյ իր դարուն անկրօնու-
 թեան և անաստուածութեան ամէնէն ոխ-
 րիմ և կատաղի ուժիկներէն մին՝ Ի
 հեռուկս իր քարոզած գաղափարներուն,
 չվարանցեալ խոստովանելու Աստուծոյ գո-
 յութեան և քրիստոնէական կրօնի մարդու
 վարդապետութեան մարդու բարոյական
 շէնքին վրայ ունեցած գերազանց ազդե-
 ցութիւնը, և ի դաստակարարութիւն իր ան-
 ձին ըսած է. «Եթէ զաւակ մ'ունենայի,
 գինքը դաստիարակելու համար իր առջև
 պիտի դնէի Աստուծոյ ներկայութիւնը հաս-
 տատող ըստ մը փաստեր և նշաններ.
 այնպէս որ եթէ սունն զար բարեկամ մը,
 ըսէր անոր՝ թէ մենք չորս էինք՝ Աստուած,
 բարեկամս, դաստիարակ և ես»:

Անա խորագիրը, գրպակի յատուկ այն եր-
 կու փոքր տետրիտուն, որոնց մէջ գործունած կը
 գտնենք Գէորդ Ապտուլլահէ անջատ և հումա
 ստ խորհրդածրիտանց շարք մը՝ կրօնական,
 բարոյական և ազգային նիթերու, գորս գրի
 աւած է սև վերջին տարիներուն, իր կենսաբի
 գանգաւն պարագաներուն մէջ: Այս մարդու
 տաշար և գեղեցիկ տողերուն մէջ՝ կը հանդի-
 պինք ինչ ինչ կրկնութիւններու մի և նոյն
 էնորոց, գորս արդիւնք կը նամարինք կտա-
 տելոյ ժամանակի և պարագաներու տակ գը-
 րուած ըլլալուն, սակայն և այնպիս ոչ ինչ կը
 կրկնուցեն իրենց սպիցութիւնէն. վազն զի ինչ-
 պէս պիտի տեսնեն ընթերցողը, ամբողջ գրու-
 րեան մէջ, իր կուս և կիկլակի հաւատքին
 ցոլերը և. ազնուական ու մարդու սրտի՝ մը
 արձագանգներն են որ սրտառոչ շնչով մը
 ուղղակի սրտի կը խօսին՝ և մարդու կենսաբի
 մարած յոյսերը կիկլակացնելով փափուկ գգու-
 ցումներու նոր աշխարհ մը կը ծաղիկեցնեն:

Ուրեմն ձեռնիկը իրեն:

1. Մահէն վեր սէրը կայ. մահէն վեր ազա-
 տութեան հաւատքը կայ. մահէն վեր արժանա-
 պատուութեան զգացումը կայ:

Մարդս կը զոհէ իր մարմինը բայց իր հետը
 կը տանի սէրը, ազատութիւնը և իր պատիւը:
 Եւ մի կրնայ յափշտակել մարդուն ձեռքէն այն-
 պիտի բան մը որ յաւտեանականէն կը բղիթի, և
 որ հոգւոյն սեպականութիւնն է:

2. Մարդս ընդհանրապէս իւր բարոյական շէն-
 քին ճարտարապետն է: Մարդս ինչ որ հոգած է՝
 իւր ազատ կամքին արդիւնքն է: Աստուած բար-
 ունի և չարին զաղափարը արդէն յայտնած է
 մարդու սրտին խորը: Եթէ Աստուած այս յայտ-
 նութիւնը ըրած չըլլար, այն ատեն ազատ կամքը
 գոյութեան պատճառ մը չէր ունենար:

Ազատ կամքը կ'ենթադրէ որ մարդս բարւոյն
 և չարի զաղափար ունի արդէն իւր հոգւոյն
 մէջ. եթէ մարդս այս զաղափարը չունենար՝ այն
 ատեն ազատ կամքը աւելի չարիք մը՝ աւելի
 վտանգ մը կ'ըլլար քան բարիք մը:

3. Քաղաքաբնութիւնը հետզհետէ նորանոր
 պէտքեր և շատ անգամ աւելորդ պէտքեր ևս կը
 ստեղծէ: Հարուստներուն ինչ մը կեղծ ու ին-
 ծու պէտքերը կարօտներուն համար շահու աղ-
 բիւր մը կը դառնան:

Ի՞նչ պիտի ըլլար այս վերջիններուն բազմը
 եթէ հարուստները իրենց ունայնասիրութիւնը

զոհացնելու սին պէտքերը չունենային: Կարծես նախախնամութիւնը տեսնելով որ մարդիկ ինքնաբերաբար իրարու օգնութեան պիտի չգան, դիտմամբ մարդու սրտին մէջ ընչին պէտքերու զգացումը գրած ըլլայ որպէս զի անոր փառաւ սիրական անւերդ ծախքերէն կարօտը կամ թշուառը օգուտ քառէ և չզրկուի կենաց բարիքներէն: Ուստի կրնանք ըսել թէ աղքատին կերակուրը շատ անգամ հարուստին անւերդ պէտքերուն և շոյալութեանը մէջ կը կայանայ:

4. Զարմանալի է որ մարդիկ ապրելու եղանակին մէջ ամենէն մեծ ճշմարտութիւնները ամենէն ետք կը թողուն և շատ անգամ իրենց այս ընթացքին զոհերը կ'ըլլան: Գիտեմք որ հարստութիւն, պատիւ ու փառք կ'անցնին, սակայն հազիւ կը մտածենք որ այս ամենը կըրնանք կորսնցունել:

Առողջութիւնը բարիք մըն է գիտեմք, սակայն ո՞վ կը մտածէ այդ թանկագին բարիքը լաւ պահպանել. մանաւանդ թէ շատ անգամ զանի իսնկաբերելու չափ ճիգ կը թափենք: Ներկայն վայելենք, ու ապագային համար դեռ շատ ժաւ մանակ ունինք ըսելով կ'անցնինք, և ահա այսպէս մտածելով է որ ներկային վայելքը շատ անգամ ապագային ցտակերը կը պատարաստէ: Վէրջապէս ներկային գերի եղողները ապագայ զոհերուն մեծագոյն թիւը կը կազմեն:

5. Կան պարկէշտ մարդիկ որ հանդերձեալ կեանքին վրայ յոյս չունենալով հանդերձ կ'ուզեն բարիք ընելով ապրիլ: Ի ֆիզիքականն և ի բարոյականն չկայ արդիւնք մը որ չունենայ իւր պատճառը, ինչպէս նաև չկայ պատճառ մը որ բաժնուած կամ անշտա մնայ ուրիշ պատճառէ մը և այս պատճառները յանուուն և յաջորդաբար կ'երկարին ահագին շղթայի մը օղակներու նման:

Այս սկզբունքը հիմ դնելէ վերջը կը հարցը նեմ. բարի, պարկէշտ և առաքինի ըլլալ և ջանալ ըլլալ, ինչո՞ւ, ի՞նչ պատճառաւ: Եթէ այս արժեի զգացումը մասնաւոր և հիմնական պատճառի մը վրայ կռթնած ըլլայ, անշտա անյօգ կամ կորիցեցեալ բան մը կ'ըլլայ, և հեռաբար գոյութեան լուրջ պատճառ մը չ'ունենար: Առաքինի ըլլալ առաքինութեան համար, ըստ ինքեան չի զոհացուներ զմարդ, վասն զի նպատակը անորոշ է: Բարի, արդար և պարկէշտ ըլլալու փափակն ու ջանքը՝ անգիտակից կերպով կապուած է հօրաբաղոյն պատճառի մը հետ որ ուժ և սնունդ կու տայ և լուեկայն կը մղէ զմեզ դէպ ի բարութիւն, դէպ ի հոգեկան զարգացում: —

Ինչպէս ծառի մը ճիւղերը կցորդութիւն մը, հազորդակցութիւն մը ունին նոյն ծառին արմատին հետ որ սնունդ և կենսք կու տայ այդ ճիւղերուն, այսպէս ալ առաքինի և բարի գործերը հազորդակցութիւն և կցորդութիւն մ'ունին արմատի մը հետ որ կենսք և սնունդ կու տայ:

Այս սկզբունքը ըմբռնելէն վերջը տարակոյս չի մնար համոզուելու համար թէ այդ բարեգործ թերահաւատին սիրտը անգիտակցաբար երկնքին հետ կապուած է:

6. Անմահութեան համար ստեղծուած ենք: — Թէ և մարդս գիտէ որ կենսքը վախճան մը ունի, այսու հանդերձ իւր մտքին մէջ՝ իւր ձեռնարկած գործը անասնման ու մշտապես ժամանակի մը տեղորոշութիւնը ունի. ուստի մարդս կը գործէ այնպէս՝ որպէս թէ երբեք պիտի չմեռնի: Այս ներքին զգացումը որ ամեն մարդու քով բնական է, ցոյց կու տայ որ մարդս արդէն իւր էութեանը մէջ ունի անասնման տեղորոշեան մը կամ անհունութեան մը հաւատքը. և այսպէս նա անգիտակցաբար կը վկայէ թէ անմահութեան համար ստեղծուած է և իւր ձկտուածները դէպ ի անմահութիւն կը միտին:

7. Գիտականք ոմանք մարդու հոգւոյն գոյութեան մասին անհեթեթ և անտրամաբան մեկնաութիւն մը կու տան. այսինքն է թէ հոգին ապրագալէս ներքին ֆիզիքական կազմութեան մէկ արտադրութիւնն է:

Եթէ այդպէս ըլլար՝ կրնար ըսուիլ թէ դաշնակին վրայ լսուած եղանակը նոյն իսկ դաշնակին մեքենական կազմութեան հնարած եղանակն է ու չի թէ նուազածու արթիւթիւն. և նոյն սկզբունքով՝ պատկերահանին վրձինը իրեն պիտի սեպհականեր կտաւին վրայ հանուած պատկերին արտադրութիւնը: Գործիքը գործողին հետ այս աստիճան շփոթելը յիբարի արգահատելի մեկնութիւն մըն է որուն կը զիջանին կամ զիջանիլ կ'երևին ամբարտաւան և կոյր գիտնականք ոմանք:

8. Ինչ է մարդ էպը. —

Այստեւէ ըստ պատկերի իւրում արար զմարդ, կ'ըսէ սուրբ Գիրքը. ըսել է թէ Աստուծոյ ամեն ստորոգելիքը. ըստ իմիք, մանրանկար ձևի ներքև ի մարդս կը գտնուին. ինչպէս ցորենի հատիկի մը կամ ուրիշ բոյսերու սերմին մէջ ծածկուած կը մնայ ապագայ համանման բոյսերու ամբողջութիւնը և անկից ալ հեռզհեռէ անհունապէս գոյանալիք բոյսերուն էութիւնը, այսպէս մարդս ալ՝ նման ցորենի հատիկին իւր էութեանը մէջ կը բովանդակէ կատարելութեան հասնելու ամէն

տարիքը. Մտթ. աւետարանին զլ. եին մէջ կը կարգաւթ. «Եղբրուք կատարեալ, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է». նոյնպէս Աղմ. 81 զլլ. «Ոչ ապաքէն դուք աստուածք իցէք» ևն. 9. Անհունն. —

Զգիտեմք թէ ի՞նչ է անհունն. սակայն կը զգամք թէ անհունութեան զաւակներ եմք. բան մը ու. յիմք մեր սրտին մէջ, որ զմեզ անցաւորէն ան. դին կը մղէ:

Աշխարհս իւր բազմազան վայելքներով չէ կա. ռող զմեզ գոհացնել. անոր տալիքը շատ թահմար է անսահմանին մթնոլորտը մտնելու. մեր ուզածը յօշակեիլէն անդին բան մըն է որ միշտ կը քանչ զփնջ և միշտ կը խուսափի:

Անհունին զաւակներ եմք, ահագին միութեան մը կոտորակներ եմք. զերազոյն ովկիանոսէ մը բամուռած հեռացած կաթիլներ եմք, որ անծա. նօթ հրամանի մը հնազանդելով՝ դարուց ան. յատակ անդունդներէն դուրս թափուած, սա. ըրն ու հովիտներն ի վայր՝ ապառաժ քարանց զարնուելով, խորտակուելով, մաքրուելով կը դառնաւճ վիտտին ի Մայր աղբիւրն. — Ի՞նչ է կենսքը եթէ ոչ հասնելու ճիգ մը, անգիտա. կնց վազել մը դէպ ի բարձր բան մը, դէպ ի անհուն մը, ձկտում մը՝ ձկտումէն աւելի բան մը Անհունին հետ միանալու, նման գետերու հո. սանքին՝ որ դէպ ի ովկիանոս կը վազեն իրենց մայր աղբիւրը գտնելու.....

10. Կենսքը նիւթականին և բարոյականին միջև կոհի մ'է, վասն զի աշխարհիս կենսքը հո. զեններ փորձել է:


Նոգիք կը փորձուին ուղղութեան, մաքրու. թեան և յառաջագիծութեան համար, որով կեան. թին նպատակը կ'ըլլայ մարդուս կատարելու. թիւնը. Քաղաքակրթութիւնը հանդերձ իւր ամէն. դիրակեցուցութեան միջոցներով չի զօրեր այս փոր. ձուելու օրէնքը խափանելու: Մարդկային ընկե. թութեան ամենէն բարձր դիրքերը գրատղները և քաղաքակրթութեան ամեն բարիքները վայե. լելու կարող անձնաւորութիւնք՝ դարձեալ չեն կրնար խուսափիլ փորձուելու օրէնքէն, որ բա. ռոյական ու հոգեկան զարգացման միակ և ան. հրաժեշտ պայմանն է:

Աշխարհիս նեղութիւնները, վիշտը, ցաւը, չար. չարանքը, վերջապէս կենաց բազմագիմի սիրտ. մաշուցները մէյմէկ գրգիւ, մէյմէկ դրգիչ պատճառներ են զմեզ մղելու դէպ ի բարւոքում, դէպ ի զարգացում և ի մի բան դէպ ի կատա. թելութիւն:

Այս մշտախոռով ու հոգեյարար կոտորն մէջ

եթէ կորսնցնեմք հաւատքն ու յոյս. կորսնցու. ցած կ'ըլլանք ամենէն զօրաւոր և անհրաժեշտ օգնականի մեր ընելիք հոգեկան ուղեւորու. թեան մէջ:

Հ. Ե. ՏԱՅՏԻ



Ե Ի Ր Ի Պ Ի Դ Է Ս Հ Ի Ն ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ Մ Է Զ

Եւրիպիդէս արդիական ոգին կը ներ. կայացնէ հին ողբերգութեան մէջ. նոր և ազատ մտածող մըն է, ինչպէս պիտի ըսուէր այսօր, որ չի հետևիր դարուն և նոյն ժամանակ ապրող ժողովրդեան կրօ. նական, բարոյական և ընկերային զաղա. փարականին, այլ անոնց կ'ընդդիմաբանէ, կը քննադատէ զանոնք, կը ջանայ փո. խակերպել և աւելի բանաւոր ու մարդ. կային ձեւեր ընծայել անոնց, առանց սա. կայն միաժամանակ մտադրութիւնն ունե. նալու նուստացնելու կամ ապականելու բարոյականն և ընկերային կարգերը: Ընդ. հակառակն կարելի է ըսել թէ իր նպա. տակը բարձրացնել է մարդկային ընկե. թութիւնը. վասն զի ճերթողի մը զլիսաւոր յարգը, ինչպէս կը յայտարարէ ինք, կը կայանայ ունեցած խոհականութեան և կորովամտութեան մէջ, որովհետև այսպէս կարելի է կ'ըլլայ մարդիկը բարւոքել. սոյն զաղափարը կը զանննք ուրիշ յոյն հեղե. նակներու քով ալ, որոնք բանաստեղծու. թեան դաստիարակական զօրութիւն և պաշտօն կ'ընձեռնէին: Հետևաբար Եւրիպի. դէս, մղուելով հանդերձ այդ քննադատող և ըսնիք բանապաշտ ոգիէն իր ողբերգու. թիւններուն նիւթին մշակման մէջ, որոնք ընդհանրապէս դիցաբանական խորք մ'ու. նին, կը համարէր նոյնքան շինող և բա. ռոյական գործ մ'ընել որքան կատարած էին Եսթրիդէս և Սոփոկլէս իրենց կրօնա. բարոյական մտայնութեամբ՝ ողբերգու. թեանց միջոցաւ:

Այնու հատեցերձ հին գրողներէ ինչպէս և նոր ուսումնասէրներէ Եւրիպիդէս ամ.